ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ
Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ի պատասխան ձեր 26.11.2019թ. գրության՝ Աբովյան փողոցի հ.հ.11, 13, 30, 32, 32/1 և Աբովյան փակուղի հ.5/1 շենքերի բնակիչների դիմումի վերաբերյալ, տեղեկացվում է, որ Թումանյան փողոցի հ.30/1 հասցեի 0.121792 հա հողամասում բնակելի-բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման համար սեփականատեր՝ Ղ. Ղալումյանին դեռևս 10.02.2017թ. Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվել է 8 վերգետնյա հարկայնությամբ բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի նախագծման թույլտվություն, որի հիման վրա համաձայնեցվել է մինչև 0.00 նիշի կառուցման նախագիծ և 14.11.2017թ. կառուցապատողին տրամադրվել է ստորգետնյա հարկերի կառուցման հ.01/18-Ղ-2023-1121 շինարարության թույլտվությունը, որի համար հիմք են հանդիսացել «Սեյսմաանվտանգություն» ՍՊ ընկերության 03.11.2017թ. և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 06.11.2017թ. հ.7/23.3/12512-17 եզրակացությունները:

Տեղեկացվում է նաև, որ Թումանյան փողոցի հ.30/1 հասցեում վերոնշյալ շենքի կառուցման համար հիշատակվող շինարարության թույլտվությունը քաղաքացիներ՝ Գ. Ազատյանի և Ե. Մանասյանի կողմից բողոքարկվել է և ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/6202/05/18 որոշմամբ ընդունվել է վարույթ, ուստի ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վերոնշյալ թույլտվությունը համարվում է կասեցված, հետևաբար Ձեր կողմից բարձրացված հարցերին հնարավոր կլինի անդրադառնալ դատարանի կողմից վերջնական վարչական ակտի ընդունման և դրա օրինական ուժի մեջ մտնելուց հետո:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ